386 Անուշ է անունն Հիսուսին,

1. Անուշ է անունն Հիսուսին,
Որքա՛ն քաղցր հնչե ականջին,
Ո՛հ, կբերկրե սիրտս լիովին
Սիրուն անունն իմ Փրկչին:

Հիսո՛ւս, ի՜նչ անուշ անուն,
Հիսո՛ւս, ամեն օր ես նույնն,
Հիսո՛ւս, թող սուրբերն երգեն,
Արժանի ես գոհության:

2. Սիրեմ անունը իմ Փրկչին,
Զի կբուժե վերքերն իմին,
Բոլոր վախերս կփարատե,
Սիրեմ անունն Հիսուսի:

3. Սիրեմ լսել անունն Փրկչիս,
Որ հարատև հրճվե հոգիս,
Հնչումն անոր սրբե արցունքս,
Գովեմ անունն Հիսուսի:

4. Տկար շունչս կարող չէ երգել,
Փրկչիս անուշ անունն օրհնել,
Ո՛հ, թե համայն աշխարհ երգեր,
Գովեր անունն Հիսուսի: